



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2011 թվականի N 35-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՅՈՂ 6-Դ
ՄԻԿՐՈՇՐՁԱՆԻ 5^Գ ՇԵՆՔԻ ԹԻՎ 5/1 ԲԱՅՎԱԾՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ











Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Արևիկանի քաղաքային համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Աճուրդային կարգով օտարել Արևիկանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող (2009 թվականի հուլիսի 30-ի N 2248416 վկայական) 6-րդ միկրոշրջանի 5^Գ շենքի թիվ 5/1 բացվածքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բացվածքի աճուրդի մեկնարկային գինը սահմանել 242000 (երկու հարյուր քառասուներկու հազար) դրամ՝ հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2011 թվականի մարտի 21-ի թիվ «017-01/Վ-011» գնահատման հաշվետվությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:


Կողմ -10

	ՀԱՅՐԱՊԵՏԱՆ ԳԵՂԱՄ		ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ		ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ
	ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՌ		ԺԱՄՀԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
	ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԻՄԱԿ		ՄԱՐԳԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
	ՓԱՆՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ		ԲԱԲԱՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Դեմ -0
Ձեռնպահ -0

Քաղաքապետ



 Կ. Գուկոյան